

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5-ԿՐԹԱԿԱՆ-2**

ք. Աշտարակ

12 հունիս 2014 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Հ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ ---ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն.Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վ. Բազմաբերդ համայնքի դպրոցի վերանորոգում աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2014թ. Նոյեմբերի 30 -ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքներ, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն

վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, *իսկ փարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:*

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փուլերով ընդունելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 31 100 000 երեսունմեկ միլիոն հարյուր հազար ՀՀ դրամ, որից 5 183 333 հինգ միլիոն հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում

(եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այս ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չեն կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա

կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխություններ իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

2) Կապալառուն է պատասխանատվություն կրում ենթակապալառուի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև ադ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝

պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արագածոտի մարզպետարան

«Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4

«Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

h/h 00044000032 «Վ» 05004247



ԿԱՊԱԼԱՌՈՒ


«ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

«Արագածոտնի մարզ, ք. Ապարան.Պ.Սևակի 11

Ակբա կրեդիտ Ազրիկուբանկ ՓԲԸ

Արագածոտն Մ/Ճ

h/h 0004330177000




Նախկյան


ՕՒՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Վ. Բազմաբերդ համայնքի դպրոցի վերանորոգում ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ


Գ/Գ	Աշխատանքի նկարագիր		Չ/մ	ՔԱ- ՆԱԿ	Միավորի արժեքը	Ընդա- մենը
					հազար ՀՀ դրամ	հազար ՀՀ դրամ
1	2	3	4	5	6	7
1.Հողային աշխատանքներ						
1	1-961	Բնահողի մշակում ձեռքով 3-րդ կարգի	մ ³	4.8	5.000	24.000
2	11-2.	Բնահողի տոփանում խճուղ	100մ ²	0.054	200.000	10.800
3	1-970	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	1.1	3.000	3.300
4	1-1591	Ամելորող քահողի բարձում հիմնաթափին էքսկ.	1000մ ³	0.0037	100.000	0.370
5	Գ310-3	Տեղափոխում 3 կմ լցակույտ	տն	6.0	1.000	6.000
2.Հիմքեր						
1	6-21	Բուտաբետոնե հիմքերի կառուցում 4-7,5	մ ³	3.3	35.000	115.500
2	6-1	Բետոնե նախաշերտ 4 - 7.5 բետոնից 100 մմ	մ ³	0.54	30.000	16.200
3	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-500С/	տն		0.000	0.000
4	15-10 15-59	Ցոկոլի երեսպատում բազալտե սալերով-3սմ	մ ²	1.50	10.000	15.000
5	6-106	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում 4 -15	մ ³	0.44	70.000	30.800
6	Շուկա	Ամրան Ա-1-6մմ	տն	0.0111	400.000	4.440
7	Շուկա	Ամրան Ա-500С-16 մմ	տն	0.0783	400.000	31.320
8	6-160	Միաձույլ ե/բ հիմնային հեծանների կառուցում Բ-15 բետոնից	մ ³	0.12	60.000	7.200
9	Շուկա	Ամրան Ա-1 - 6 մմ	տն	0.0028	400.000	1.120
10	Շուկա	Ամրան Ա-500 Ը -14 մմ	տն	0.014	400.000	5.600
11	6-168	Ե/բ միաձույլ զոտու կառուցում 4-15 բետոնից	մ ³	0.40	60.000	24.000
12	Շուկա	Ամրան Ա-1-6 մմ	տն	0.0103	400.000	4.120
13	Շուկա	Ամրան Ա-500С-14 մմ	տն	0.0522	400.000	20.880
14	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-500С-10մմ/	տն	0.0025	400.000	1.000
15	8-140	Պատերի կառուցում 20 սմ հաստ. պեմզաբլոկից	մ ³	2.30	25.000	57.500
16	11-11.	պեմզաբլոկի անցքերի լիցք թեթև բետոն Բ - 7.5	մ ³	0.90	20.000	18.000
17	8-59	Պատի շարվածքի ամրանավորում	տն	0.0147	400.000	5.880
18	15-201	Արտաքին պատերի սվաղ ց/ա շաղախով	100մ ²	0.416	150.000	62.400
19	15-521	Արտաքին պատերի և շեպերի ներկում ֆա սաղային ներկով	100 մ ²	0.416	60.000	24.960
3.Ճակտոն						
1	6-168	Ե/բ միաձույլ զոտու կառուցում 4-15 բետոնից	մ ³	0.16	60.000	9.600
2	Շուկա	Ամրան Ա-1-6 մմ	տն	0.0041	400.000	1.640
3	Շուկա	Ամրան Ա-500С-12 մմ	տն	0.0143	400.000	5.720
4	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-500С-10մմ/	տն	0.0013	400.000	0.520
5	8-140	Պատերի կառուցում 20 սմ հաստ. պեմզաբլոկից	մ ³	0.50	25.000	12.500
6	11-11.	պեմզաբլոկի անցքերի լիցք թեթև բետոն Բ - 7.5	մ ³	0.20	20.000	4.000
7	8-59	Պատի շարվածքի ամրանավորում	տն	0.006	400.000	2.400
8	12-280	Ճակտոնի գլխադիր ց/թիթեղից 0,55 մմ	100մ ²	0.028	400.000	11.200
4.Տանիք /նախամուտք/						
1	10-70.	Ծպեղնատրի տեղադրում (մարթակ,կանգն,մաուելրատ,թեքան)	մ ³	0.36	150.000	54.500
2	9-24,	Տանիքի արոֆիլավոր ցինկապատ մե-տաղաքիթեղ ԿՊ -21- 0,55 մմ	100 մ ²	0.08	150.000	16.000
3	Շուկա	Ամրան Ա-500 Ը -14 մմ	տն	0.06	150.000	9.000
4	12-280	Ճակտոնի գլխադիր կառուցում ց/թիթեղից 0,55 մմ	100մ ²	0.007	400.000	2.800



5	10-201 37-1	Փայտանյութի մշակում հականեխիչ և հակահրդեհային լուծույթով	մ ³	0.33	7.000	2.310
6	10-203 37-3	Կավարամածի մշակում հականեխիչ և հակահրդեհային լուծույթով	100 մ ²	0.08	30.000	2.400
7	12-280	Ցվիկի երեսապատում գ/թիթեղից 0,55 մմ	100մ ²	0.023	400.000	9.200
8	8-153	Կցումներ գ/թիթեղից մինչև լայնութ.- 0,7մ	մ	6.9	3.000	20.700
9	4-85	Կախովի առաստաղի իրականացում պլաստմաս ցինկ.մետաղ կարկասի վրա /գունավոր/	մ ²	5.3	10.000	53.000
10	Շուկա	Յեղյուս	տն	0.0025	400.000	1.000
11	10-23	Ցվիկի կառուցում տախտակից-25 մմ	մ ²	1.4	4.000	5.600
12	Շուկա	Տախտակ ցվիկի համար	մ ³	0.02	0.000	0.000
5.Հատակներ						
1	23-160	Բետոնե նախաշերտի քանդում	մ ³	0.6	10.000	6.000
2	23-227	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	1.0	1.000	1.000
3	Գ310-5	Շին.աղբի Տեղափոխում 5կմ	տն	1.0	1.000	1.000
4	11-2.	Բնահողի տոփանում խճով	100մ ²	0.071	200.000	14.200
5	11-11.	բետոնե նախաշերտի կառուցում 100մմ	մ ³	0.71	30.000	21.300
6	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ ²	0.071	200.000	14.200
7	11-221	Հարթակի երեսապատում բազալտե սալերով -3 սմ հաստությամբ	մ ²	7.1	10.000	71.000
8	15-10 15-59	Շրիշակներ բազալտե սալերով-3սմ	մ ²	0.54	10.000	5.400
6.Տանիք /մասնաշենքերի/						
1	46-98	Տանիքի ծածկի քանդում ասբոշիֆերից	100 մ ²	10.40	50.000	520.000
2	10-70. k=0,5	Տանիքի փայտանյութի քանդում	մ ³	2.4	24.040	57.696
3	10-70. k=0.5	Ջրհորդանի տախտակամածի քանդում	մ ³	5.40	15.000	81.000
4	46-96	Ջրհորդանի քանդում մետաղական թիթեղից	100 մ ²	1.810	40.000	72.400
5	23-227	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	15.0	1.000	15.000
6	Գ310-3	Շին.աղբի Տեղափոխում 3կմ	տն	15.0	1.000	15.000
7	10-70.	Ծախցիկների տեղադրում (մարբակ,կանգն,մաուելյատ,թեքան)	մ ³	7.93	150.000	1189.500
8	9-24,	Տանիքի պրոֆիլավոր ցինկապատ մետաղաթիթեղ ԿՊ -21- 0,55 մմ	100 մ ²	10.46	450.000	4707.000
9	Շուկա	Կավարամածի խտացում վերանորոգում 50*60	մ ³	4.39	150.000	658.500
10	12-278 8-3	Ջրհորդանի կառուցում ցինկապատ թիթեղից	100մ	2.586	600.000	1551.600
11	Շուկա	Տախտակ ջրհորդանի 50 մմ հաստ	մ ³	6.60	150.000	990.000
12	Շուկա	Ջրթափ խողովակ 140 մմ	մ	112.0	1.000	112.000
13	8-195	Չափար	հատ	21.0	1.000	21.000
14	Շուկա	Ծունկեր	հատ	21.0	1.000	21.000
15	10-71	Չեղնալուսամտի տեղադրում	հատ	2.0	15.000	30.000
16	10-71 k=0,5	Չեղնալուսամտի վերանորոգում /աստիճանների կառուցումով/	հատ	2.0	15.000	30.000
17	12-280	Գազաթնագծի կառուցում գ/թիթեղից 0,55 մմ	100մ ²	0.474	400.000	189.600
18	10-201 37-1	Փայտանյութի մշակում հականեխիչ և հակահրդեհային լուծույթով/կեղևից մաքրումով/	մ ³	33.5	7.000	234.500
19	10-203 37-3	Կավարամածի մշակում հականեխիչ և հակահրդեհային լուծույթով	100 մ ²	10.46	3.800	3.800
20	12-280	ճակտոնի երեսապատում ցինկապատ թիթեղով 0,55 մմ	100մ ²	0.075	19.000	19.000
21	12-280	Հոսանցի կառուցում գ/թիթեղից 0,55 մմ	100մ ²	0.12	400.000	42.000
22	8-153	Կցումներ գ/թիթեղից մինչև լայնութ.- 0,7մ	մ	5.0	3.000	15.000
23	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-2/	տն	0.1447	400.000	57.880
24	10-22	ճակտոնի կառուցում տախտակից - 25 մմ	մ ²	1.5	3.000	4.500
25	23-47	Անցքերի զայլիկում 370 մմ խորությամբ	100անցք	2.54	50.000	127.000
26	46-71	Անցքերի ցեմենտացում	մ ³	0.02	20.000	0.400
7.Բազվածքներ						
1	23-172	Պատուհանների քանդում	100 մ ²	1.879	94.959	178.466
2	23-174	Դռների քանդում	100 մ ²	0.1875	100.000	18.750



3	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում 6 սմ /բացվող/ (օտար.պրոֆիլ,սպ, 4 խցիկ)	մ ²	43.64	29.500	1287.380
4	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում 6 սմ /բացվող/ (օտար.պրոֆիլ,սպ, 4 խցիկ)	մ ²	141.65	29.500	4178.675
5	Շուկա	Մետաղապլաստե վերնափեղկի տեղադրում 6 սմ /բացվող/ (օտար.պրոֆիլ,սպ, 4 խցիկ) կամարածև	մ ²	2.65	29.500	78.175
6	Շուկա	Ալյումինե դրան տեղադրում (օտարերկրյա պրոֆիլ4+4, սպիտակ,թերմոկամրջով) 60 մմ հաստ	մ ²	18.75	60.000	1125.000
7	7-51.	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	մ ²	35.1	3.000	105.300
8	Շուկա	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում /35 սմ լայնութ./	զմ	100.1	2.500	250.250
9	15-210	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափերի տակ ց/ավ. սվաղի իրականացում	100մ	0.991	60.000	59.460
10	12-280	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափերի երեսապատում ց/թիթեղով	100մ ²	0.149	400.000	59.600
8.Հարդարման աշխատանքներ						
1	15-277-1	Շեղերի սվաղում գաջի շաղախով	100 մ ²	0.791	500.000	395.500
2	15-210	Արտաքին շեղերի սվաղում ց/ա շաղախ շաղախով	100մ	3.125	60.000	187.500
3	15-568	Շեղերի լուղաներկում	100մ ²	0.791	100.000	79.100
9.Սալվածք						
1	1-961	Բնահողի մշակում ձեռքով 3-րդ կարգի	մ ³	26.0	3.000	78.000
2	1-1593	Ավելորդ բնահողի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մ ³	0.026	100.000	2.600
3	Գ310-3	Բնահողի տեղափոխում 3 կմ	տն	41.6	1.000	41.600
4	11-2.	Բնահողի տուփանում խճով	100մ ²	2.430	200.000	486.000
5	11-11.	Բետոնե սալվածք 100 մմ հաստությամբ	մ ³	24.30	30.000	729.000
6	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ ²	2.430	200.000	486.000
7	23-169	Սալվածքի քանդում	100 մ ⁴	1.8	60.000	108.000
8	23-227	Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	14.0	1.000	14.000
9	Գ310-3	Տեղափոխում 3կմ	տն	14.0	1.000	14.000
10.Պատերի տորկրետացում						
1	1-965	Բնահողի քանդում ձեռքով 3-րդ կարգի	մ ³	6.5	3.000	19.500
2	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ ³	6.5	3.000	19.500
3	23-160	Բետոնե նախաշերտի քանդում	մ ³	0.61	10.000	6.100
4	11-223	Պատերի գաջի սավաղի քանդում	100 մ ²	0.275	30.000	8.250
5	6-251 6-249	Պատերի տորկրետացում - 5սմ	մ ²	62.0	6.000	372.000
6	23-48	Անցքերի գայլիկոնում d=16մմ մինչև 500 մմ խորությամբ	100անցք	1.08	50.000	54.000
7	7-334	Ցանցերի ձգում պատերով /Ա - 1/	տն	0.0826	60.000	4.956
8	ինՖ.տեղ	Ցանց 4մմ 150*150 մմ	մ ²	62.00	1.200	74.400
9	6-86.	Խարխուխի տեղադրում անցքերում / Ա-2/	տն	0.0433	40.000	17.320
10	15-201	Արտաքին պատերի սվաղ ց/ա շաղախով	100մ ²	0.345	150.000	51.750
11	15-246-1	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելաված որակի	100 մ ²	0.275	30.000	8.250
12	8-190	Արտաքին աշխատանքների համար տախտակամածի կառուցում	100 մ ²	0.07	30.000	2.100
13	11-11.	Բետոնե նախաշերտի կառուցում 100մմ	մ ³	0.61	30.000	18.300
14	23-227	Շին.աղբի բարձում ինքնաթափին.	տն	2.50	1.000	2.500
15	Գ310-5	Շին.աղբի Տեղափոխում 5կմ	տն	2.50	3.000	7.500
16	8-140	Պատերի կառուցում 20 սմ հաստ. պեմգարլոկից	մ ³	0.28	25.000	7.000
17	Շուկա	Ամրան Ա-1-6 մմ	տն	0.0034	400.000	1.360
18	15-246-1	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելաված որակի/ց	100 մ ²	0.014	200.000	2.800
19	8-27	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում բիտումի մածիկով	100մ ²	0.03	200.000	6.000
20	15-568	Պատերի լուղաներկում	100մ ²	0.014	100.000	1.400



11. Բազվածքի ամրացում						
1	46-7	Բազվածքների ամրացում անկյունակից Պ-1 /անցքերի գայլիկունումով/	տն	0.0982	50.000	4.910
2	ինՖ տեղ	Մետաղական անկյունակ 80*80*6	մ	10.2	4.000	40.800
3	ինՖ տեղ	Մետաղական անկյունակ 50*50*5	մ	0.80	1.000	0.800
4	ինՖ տեղ	Պողպատ շերտավոր 50*4	մ	7.00	1.000	7.000
5	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-2/	տն	0.009	400.000	3.600
6	15-298	Ներքին պատերի սվաղում ց/ավազ շաղախով ամրանային ցանցի վրա 20*20 բջիջ -3 մմ հաստ	100մ ²	0.0210	150.000	3.150
7	15-614	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում	100 մ ²	0.03	100.000	3.000
12. Բազվածքներ/սպորտդահլիճ/						
1	23-172	Պատուհանների քանդում	100 մ ²	0.567	94.959	53.842
2	Շուկա	Մետաղապլաստ պատուհանների տեղադրում 6 սմ /բացվող/ (օտար. պրոֆիլ, սպ, 4 խցիկ)	մ ²	10.92	29.500	322.140
3	Շուկա	Մետաղապլաստ պատուհանների տեղադրում 6 սմ /բացվող/ (օտար. պրոֆիլ, սպ, 4 խցիկ)	մ ²	45.78	29.500	1350.510
4	15-277-1	Շեղերի սվաղում գաջի շաղախով	100 մ ²	0.310	500.000	155.000
5	15-210	Արտաքին շեղերի սվաղում ց/ա շաղախ	100մ ²	0.792	60.000	47.520
6	15-568	Շեղերի յուղաներկում	100մ ²	0.310	100.000	31.000
7	15-210	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափների տակ ց/ավ. սվաղի իրականացում	100մ	0.252	60.000	15.120
8	12-280	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափների երեսպատում ց/թիթեղով	100մ ²	0.038	400.000	15.200
						24682.54
						1234.127
						25916.66
						5183.333
						31100.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան


ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակի Վ. Պետրոսյան 4

ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
 հ/հ 900441000032 ՀՎՀՀ 05004247

Աշխատակազմի ղեկավար

Հ. Գևորգյան

(ստորագրություն)



ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԵՍ ԵՎ ՆԱ ՄՊԸ


ՀՀ Արագածոտնի մարզ,

ք. Կապանի Պ. Սևակի 11

Ակբա կրեդիտային կազմակերպության ՓԲԸ Արագածոտն 7/8

ՀՎՀՀ 05204081

ՀՎՀՀ 05204081



Մահակյան

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Վ. Բազմաբերդ համայնքի դպրոցի վերանորոգում ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Վ. Բազմաբերդ համայնքի դպրոցի վերանորոգում	31 100 000 երեսունմեկ միլիոն հարյուր հազար	Պայմանագրի կնքման օրը	30.11.2014թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ.
Պետրոսյան 4

ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
h/h 900441000032 ՀՎՀՀ 05004247
Աշխատակազմի ղեկավար՝

Հ. Գևորգյան _____
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱՆԱՌՈՒ

«ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ,
ք. Ապարան, Պ.Սևակի 11
Ակրա կրեդիտ Ագրիկուլթանկ ՓԲԸ
Արագածոտն Մ/Ճ
h/h 220043331127000



Կ.Տ Գևորգյան

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Որպես»

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 14 թ.' ըստ ամիսների՝ ընդ որում													
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի	
1.	Վ. Բազմաբերդ համայնքի դպրոցի վերանորոգում	-	-	-	-	-	0	31 100 000	31 100 000	31 100 000	31 100 000	31 100 000	31 100 000	31 100 000	31 100 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


«Սրբազան» մարզպետարան
«Սրբազան» մարզ, ք.Աշտարակի Վ.
Պետրոսյան 4
«Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
h/h 900441000032 ՀՎՀՀ 05004247
Աշխատակազմի ղեկավար՝



[Handwritten signature]
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ
«Սրբազան» մարզ,
ք. Ապարան, Պ.Սևակի 11
Ակրա կրեդիտ Ազրիկոյանի ՓԲԸ
Արագածոտն Մ/Ճ
h/h 220043331127000
ՀՎՀՀ 05204081



[Handwritten signature]
Տնօրեն՝

կնքված աշխատանքների կատարման
թիվ ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5-ԿՐԹԱԿԱՆ-2 գնման պայմանագրի

Կատարող

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի _____ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ _____ ի _____ դեմ

և Կատարողը՝ _____ դեմ
_____ , հիմն
ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները
մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքները)
համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և
գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20 թ-ից
_____ 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ
աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամա- նակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը
հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.